

Պաշխոսիքի մի այլ բաժնուս սեղաններին վա-
զարված են չվեղական լրագրեր, ամսագրեր
պատկերապատգոյ հանդէսներ: Քաղաքակրթու-
նային հարուստ մասնուրի պատկեր է դա-
նում Ս. Սահարեանս:

23
 9
 4
 5
 7
 1
 10
 11
 12
 13
 14
 15
 16
 17
 18
 19
 20
 21
 22
 23
 24
 25
 26
 27
 28
 29
 30
 31
 32
 33
 34
 35
 36
 37
 38
 39
 40
 41
 42
 43
 44
 45
 46
 47
 48
 49
 50
 51
 52
 53
 54
 55
 56
 57
 58
 59
 60
 61
 62
 63
 64
 65
 66
 67
 68
 69
 70
 71
 72
 73
 74
 75
 76
 77
 78
 79
 80
 81
 82
 83
 84
 85
 86
 87
 88
 89
 90
 91
 92
 93
 94
 95
 96
 97
 98
 99
 100

պատճառով սկսել են բազմաթիվ ստորագրել հիւանդութիւնները:

Մայրաքաղաքի լրագրիչները հաղորդում են, որ հաղորդակցութեան ճանապարհները մինչև տարածութիւնը մտադրութիւն ունի մի շարք աշխատանքներ սկսել թիֆլիս—Վրացիականական ճանապարհը ձիւնափուլում քանակից և քարակոյտերից պաշտպանելու համար, որոնք խանգարում են կանոնաւոր երթևեկութիւնը այդ ճանապարհի վրա:

Ստացանք «Տեղեկագիր» երրորդ տարեշրջանի ազգային կրթարան-որբանոցի ի կիպութեամբ գրքոյից, որ բաղկացած է փոքրագիր 41 երկերից և պարունակում է իր մէջ կիպութեամբ կրթութեան կրթարան-որբանոցի հաշիւը 1899 թվի մարտի 1-ից մինչև ներկայ 1900 թվի մարտի 1-ը:

ՄԱՆԳԼԻՍԻՑ մեզ գրում են. «Յունիսի 23-ին Մանգլիսիսի վարժարանից թոշակաւոր Գեորգի Ղուկասեան, որ մօտ 10 տարի ուսուցչութիւն է արել հայ եկեղեցական-ծխական դպրոցներում Մեղրի և Նուխի Հանգուցեայ 35 տարեկան էր»:

Նոր-Բայազէտի գաւառի Վերին-ՂԱՐԱՆԼՈՒՂ գիւղից մեզ գրում են հետեւեալը. «Յունիսի 17-ին սաստիկ անձրևի ժամանակ կայծակը խիստ երեք կանայց Վերին-ՂԱՐԱՆԼՈՒՂ գիւղում. նրանցից մէկի գլուխը, երեսը այրվել է և լոկ կաշին է միայն մնացել, երկրորդի ամբողջ ձախակողման երեսը, գլխի կէտը և ձախ ձեռքն այրվել է, և երրորդի միայն երկու ձեռքերն են սեւացել: Այդ կանայք, ինչպէս պատմեցին, անձրևից առաջ նստել էին պատի տակ և խօսակցում էին. յանկարծ անձրևը տեղի ունեցաւ, իսկ 20 րոպէից յետոյ կայծակը խիստ պատին և ապա կանայց: Պատը քանդվեց»:

Բօրչալուի գաւառի ՅՈՒՆԱՆԳԱՐԱ գիւղից մեզ հաղորդում են, որ քանքանքը եւ մարդերը շատ բաւարար վիճակի մէջ են: Ոտոր արդէն հնձում են, դարին էլ կը սկսեն շուտով հնձել:

ՇՈՒՂԱՎԻԻՑ մեզ գրում են. «Շուրալիքում տարածված են ներկայումս «քուրթէ» և «ղը-ղըլ» հիւանդութիւնները, որոնք, սակայն, չեն տարբերուի ձեռք առած միջոցների, ընդարձակ կերպով չեն տարածվում: Չը նայելով բնութեան գեղեցկութեան և խմելու մաքուր ջրերին, հիւանդութիւնը օրից օր շատանում է (մանաւանդ թոքախտ), որովհետեւ գիւղը աղքատ է, անհրաժեշտ խոտ են և զօրք բակերից, իւրաքանչիւր սենեակում ապրում են 5—8 հոգի, իսկ գոմերը գիւղամիջում լինելու պատճառով մաքրութեան վրա դժուարանում է հսկել: Բօրչալուի գաւառի հարիւր յիսուն հազարից աւելի ազգաբնակչութիւնը երկու բժիշկ ունի, մէկը կառավարում է Եկատերինսկի ճիւղի հիւանդանոցը, իսկ միւրը գրաւված է յաճախակի պատահող սպանված մարդկանց դիակների անդամահատութեամբ և արձանագրութեամբ: Թէեւ Բօրչալուի ազգաբնակչութիւնը աղքատ է բժիշկների կողմից, բայց նրանց աւանդուները հարուստ են բժիշկներով: Գաւառում չորս անասնաբոյժներ կան»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Կապիտան Գէորգի, որը երկար ժամանակ եղել է չինական եւ հայկական ծառայութեան մէջ, «Berliner Tageblatt» լրագրում գրում է.

«Չինաստանում տեղի ունեցած երկրաշարժի խառնակութիւնները ստիպեցին ինձ աչքի առնել իմ յիշատակարանը, և ես այնտեղ գտայ ոչ-անհետաքրքիր նկատողութիւններ չինացիների հայտնաբերած մասին եւրոպական կուլտուրայի և նրա արժանաւորութիւնների ու դէպի օտարազգիները նրանց ունեցած անկողնութեան մասին:

«Դա, ի հարկէ, ճիշդ է,—ասեց ինձ մի բարձրաստիճան մանդարին, որը եւրոպական կուլտուրայի կողմնակից է համարվում,—եւրոպացիները տեղիւնական հմտութիւնները անապահալեցին ունեցան երկրի կուլտուրական կրթութեան վրա, բայց այնքան էլ աւելի պայծառ կերպով երեւաց նրա չարամիտ ազդեցութիւնը առանձին անհատների բնավորութեան վրա: Միթէ դուք եւրոպացիներ մեզանց աւելի երջանիկ էք ձեր ար-

գիւնաբերութեամբ, երկաթուղիներով և պատերազմի կատարելագործված ոչնչացող թիւն-դանթներով: Դուք դատարարակցիք միայն անյազ, ագահ, ոչնչից գոհ չը մնացող մի ժողովուրդ: Կառավարութեան և ժողովուրդների միջեւ յարաբերութիւնները միայն սուր կերպարանք առան, որովհետեւ մի կողմից եւրեւան երկրից, իսկ միւս կողմից—անհասկալի անհասկալիութիւն և պարծենկոտութիւն: Այժմ նայե՛ք մեզ: Մենք ձեզանից վատ չենք մշակում մեր դաշտերը, ձեզանից նոյնպէս վատ չենք հագցնում մեր աշխատասէր եւ սակաւագէտ ժողովուրդը, և մենք երջանիկ ենք: Դա է գլխաւորը: Իսկ զօրքները ամէն տեղ կան, և միթէ ձեզ մօտ չը կան Դժգոհութիւնը յատուկ է մարդկային բնաւորութեանը, կուլտուրական լինի նա թէ ոչ: Դուք ասում էք, որ մենք երկաթուղիներ պէտք է անցկացնենք մեր երկրում: Ինչ որ անհրաժեշտ է ձեզ համար, մեզ համար ամենեւին կանքի անհրաժեշտ պայման չէ ներկայացնում: Ամբողջ հազարամասերի ապրանքներ փոխադրելու համար մենք եւրա էինք գնում ուղտերով և ջոկանքներով հիւսիսից մինչև հարաւ: Արդեօք դուք մեծ հետեւանքների էք հասել ձեր երկաթուղիներով: Մեզ մօտ սով է լինում, իսկ զօրք աղատ էք դրանից: Բնութեան երեւոյթներն են սովի պատճառը, իսկ միթէ դուք ձեր գիտութիւններով կարողանում էք աջողութեամբ կուլ գրանց դէպ ի՞նչ բանի մասին ենք կարողում ձեր լրագրիչներում: Յիշե՛ք, աղիւծի համար սկսված անասնաւոր մի դարմանադար: Ի՞նչու համար սկսվեց նա: Փողի համար: Նա նպատակ միայն մեր և անգլիական ժողովուրդների կազմալուծութեանը: Ափիօնը անխնայ է,—ասում են նրանք: Կարող է արդեօք մեր ժողովուրդը հաւատալ ձեր կուլտուրային, երբ նա այդ տեսնում է և ստիպված է համբերել: Այդ պատճառով մի դարմանադար մեր առեւտրութեան և նրա հետեւանքների վրա: Այժմ կրօնը: Ի՞նչու էք կամենում բռնի կերպով մեր վրին փաթաթել ձեր կրօնը, որի լաւ հետեւանքները, ճշմարիտ, չենք տեսնում: Դուք խռովութիւն մտցրեք մեր ժողովուրդի մէջ, որը մեծացած է պետական կրօնի հասկացողութիւններով և որը, ճշմարիտ որ, բարձրագոյն փիլիսոփայութիւն է: Ի՞նչ կասէք դուք եթէ մենք ձեզ մօտ ուղարկէինք մեր միսիօնէրներին: Դուք կարծում էք նրանք աջողութիւն չէին ունենալ: Շատ կարելի է աւելի մեծ աջողութիւն կունենային, քան թէ ձերօք մեզ մօտ ունենալ»:

ՆԱՄԱԿ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թ է հ ր ա ն, յունիսի 8-ին

Մայիսի 31-ին պարսիկ ամբոխի մէջ դարձեալ յուզմունք առաջացաւ: Վաղ առաւօտից արդէն բոլոր խանութները փակել էին: Ժողովուրդը խռոված գիւնում է դէպի դատարան: Ասքի-Դօվին (քաղաքապետը) հրամայում է փարաշներին ներս չը թողնել, սակայն չեն լսում և զօրով ներս են խուժում և սկսում են դատարանի դռներն ու լուսամուտների ապակիները կոտրատել: Ասքի-Դօվին վախճանալով կատաղի ամբոխից՝ «Քաղաք-Դօվին» միջով փախչում է դէպի տուն և ազատվում է Ասում են, եթէ բռնէին նրան, կը սպանէին:

Այդպիսի ամբոխը դուրս է գալիս, գնում է մուշտէիդի տունը և պահանջում նրանից, որ գալ իրան առաջնորդէ կամ մի ճանապարհ ցոյց տալ: Սակայն այդտեղ ամբոխը հանդիպում է մի անսովոր տեսարանի և մնում է ապշած: Տեսնում է, որ իր կրօնական պետը, օգին դրած առաջ՝ կերտւումով է զբաղված: Այդ բանից վրդովված ամբոխն սկսում է մուշտէիդի տունը տակն ու վրա անել և քանդել: Ասում են մինչև անգամ, որ դրան ծնծում էլ են: Իրարանցման միջոցին մուշտէիդի տանից հանում են նաեւ 30 շիշ գինի, մի դահիրա, մէկ թմբուկ և երկու հատ մարմնամարդական ձողեր:

Այդ ժամանակ վրա է հասնում Ամիր-խան-Սարդարը (պաշտպարը — զօրքի ընդհանուր հրամանատարը) մուշտէիդի որդու հետ բաւականաչափ զօրքով և սկսում է ցրվել ամբոխը, հաւատացնելով որ հացն է ժամացաւ, լի-տոր դարձաւ 28 շահի (կօպէ), իսկ մօր չարէքը (2 ֆունտ) 12 շահի, այնպէս որ կարող են գնալ և խանութները բանալ: Երբութիւնից հրամայված է. «Ով որ հէնց հիմիկվանից չի բայ անի իր խանութը և իր առեւտրով կամ արհեստով պարտալի, նրա ունեցած-չունեցածը տէրունական կը լինի և գլուխն էլ կը կտրվի»: Այս լսելով ամբոխը, ցրվեց և գնաց

խանութները բացեց: Հետեւեալ օրը, որ ուրբաթ էր, կառավարութիւնը երկուց կրկնով, որ գուցէ նորից խռովութիւններ բարձրանան մարդկանց պարագլութիւնից՝ խտրեւ հրամայել էր, որ ոչ ոք իր խանութը չը փակի և արդարեւ ոչ ոք չէր փակել:

Ժողովուրդը գեւ բուրովին չէ խաղաղվել, ապաստում է, որ հացի լիտոր դառնայ 1 դան, իսկ մօր չարէքը՝ 10 շահի. եթէ չը դառնան, նորից խռովութիւններ կը յարուցանի:

Այս բոլոր խռովութիւնների մէջ Շահ-Սալ-թանէն (թագաւորի փոխանորդը) շատ թույլ վարվեց և ցոյց տուց իր անգործութիւնը երկրի կառավարելու և ժողովուրդին զսպելու մէջ:

Ամենից շատ յուզված են կանայք, որոնց չնորհիւ հացը վերջապէս է ժամացաւ: Տղա-մարդիկ մեծ զովասանքով են խօսում կանանց մասին, սակեւով, որ եթէ նրանք չը լինէին, իրանք ոչինչ անել չէին կարող այդ դէպքում: Կանանց աներկիւղութեանը մանաւանդ նպաստում էր այն հանգամանքը, որ պարսից օրէնքով իրաւունք չը կայ կանանց վրա ձեռք բարձրացնել. կինը աւելի շուտ կարող է տղա-մարդին ծնել, քան թէ տղամարդը՝ կնոջը: Սակայն կանանց քաջագործութիւնը առանց զօհի չէր: Խառնակութեան միջոցին չորս կին սպանվեցին: Կանայք հետեւեալ արդարա-ցի արտուայն էին յայտնում կառավարութեան դէմ. «Սա ինչ կառավարութիւն է, որ ոչ մի բանի վրա ուշադրութիւն չէ դարձնում: Ժողովուրդի մեծամասնութիւնը քաջամտութիւնից մեծնում է, այդ նրա համար ոչինչ: Կառավարում էք, լաւ կառավարեցէք, ապա թէ ոչ կը դնանք ուսաց դեպքանատուն, կընդունենք ուսաց հապատկութիւնը և կը դիմենք նրան, որ գալ և մեզ կառավարի»: Ասում են, որ գնացողները կընեն:

Աղքատ ժողովուրդի այդ բողբոջ արդարացի է, որովհետեւ թէ կառավարութիւնը և թէ հարուստ դասակարգը բոլորովին ուշադրութիւն չեն դարձնում նրա վրա, աչքաթող են արել նրան: Պարսկաստանում աղքատ դասակարգը վերին ստիճանի ճնշված դրութեան մէջ է գտնվում: Շատերը տուն-տեղ չունեն, ընտել են բացօդային և քաղցած են անցկացնում: Մինչդեռ հարուստ դասակարգը և խաները ունեն մեծ-մեծ տներ ընդարձակ բակերով, գեղեցիկ աւազաններով և զբոսայտաններով: Կանանց փառանք ձախով կահաւորված, մուսաքանակ և թաւեայ բաղկածներով, բարձրով և շատ թանկագին զօրքերով զարդարված, չքեղ կառքեր, տանեակ ծառաներ, ներքիններ, սենեկապետներ, երկու տանեակ կանայք, աղախներ և այլն: Այսպէս այդպէս է, կուշան ինչ կը զգայ, թէ մէկը քաղցած է: Հիմա համեմատեցէք այդ ճոխ և չքեղ ապրուստի հետ վերջին ծայր աղքատի գոծու կեանքը:

Ս. Բարալեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

«Պետերբուրգից «Рyсск. Вѣд.» լրագրին հետագրում են յունիսի 23-ին. «Քաղաքում և բարձրում լուր է պտտում, որ իբր թէ տեղեկութիւն է ստացված, որ ուսաց և անգլիական դեպքանները ամենանորոգ կերպով են սպանված, ուսաց մինչև անգլիականները մէջ այդ աղիւծով նոյնպէս ոչինչ տեղեկութիւններ չեն ստացված: Օտարազգի դիպլոմատների մէջ յաճախութեամբ այն հանգամանքն է տիրում, որ Ռուսաստանը և Եւրոպայի չեն թող տալ, որ եւրոպական պետութիւնները բաժան բաժան անեն Չինաստանը և որ Չինաստանի այդ երկու հարեւան պետութիւնները այժմ արդէն կատարեալ հարաւորութիւն ունեն ճնշել ժողովրդական շարժումը: Չինաստանում եւրոպական դեպքանութեան մէջ համոզված են, որ չը նայելով պատերազմի սպառնալի նշաններին, պատերազմ չէ լինելու, որովհետեւ ժողովրդական շարժումը կը ճնշվի մինչև և եւրոպական զօրքերի Չինաստան գնալը»:

«Պէկինում գտնվող օտարազգիների թիւ վերաբերմամբ լրագրիչների տեղեկութիւնները տարբերվում են: «Westminster Gazette» լրագրի այդ թիւը որոշում է 250 մարդ: Անգլիական դեպքանատունը բաղկացած է 10 մարդուց: Այդ դեպքանատուն են ուղարկված 20 երիտասարդներ, որոնք սովորում են չինական լեզուն: Ռուսաց դեպքանատունը գտնվում են 12 ազգային երիտասարդների, գերմանական 9, ֆրանսիական 8 և ամէրիկական 2 չորս երիտասարդ: Միսիօնէրական ընկերութիւններից ամենաբարձրամարդը՝ ֆրանսիական է: Այդ ընկերութեան մէջ գտնվում են 40 քահանաներ և «Եղբայրներ» Լոնդոնի միսիօնէրական համայնքը բաղկացած է ինն մարդուց: Սակայն, բայց այդ համայնքներից, կան էլ մի քանի անգլիական և ամէրիկական ընկերու-

թիւներ: Պէկինի համալսարանում դասախօսում են 10 օտարազգիներ և նրանց մէջ միսիս Սիլեսա Տէրէյ մաթեմատիկայի պրօֆէսոր է, իսկ ախիւն կինը—անգլիական լեզուի պրօֆէսոր: Մարաշաների ընդհանուր տեսուչ Բօբլետ Հարաթի մօտ ծառայում են 25 եւրոպացիներ:

ՄՇԱԿԻ ՀՆՈՍԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ

27 յունիսի

ՆԻՒ-ԵՕՐԿ: Այստեղի գնեւաւոր-կլարաթմէյատէրը հրամանագիր ստացաւ ուղարկել Պօր-թօրիկ, Կուրա կղզու վրա, փոխադրող նաւ, Չինաստան փոխադրելու համար բոլոր աւելորդ կանոնաւոր զօրքերը: Նրանք կուղարկվեն Սան-Ֆրանցիսկօի վրայով:

ԿԻԼ: Կայսրը «Հօհենցոլերն» նստով ճանապարհ ընկաւ Բէրլին:

ՇԱՆԳՀԱՅ: Չինական աղբիւրից ստացված արժանահատ աղբիւրի հիման վրա, կայսրութեան կրկին երկրի վարչութիւնը ձեռքն առաւ յունիսի 30-ին, նշանակեց Իւգլուին առաջին մինիստր և սուրհանդակ ուղարկեց, որը օրական հարիւր մղոն է անցնում, չնորհակալութիւն յայտնելու Եւանգել նահանգների փոխարքաներին հաւատարմութեան համար և առաջարկում է նրանց ամեն միջոցները գործ դնել պաշտպանելու օտարազգիներին:

ՎԻԼՀԷԼՄԱՅԷՆ: Առաջին նաւատորմի երկրորդ դիվիզիան եկաւ նաւախաղարան:

ԼՈՆԴՈՆ: Բօրբոտոս հաղորդում է հետագրով Պէտրօբայից յունիսի 26-ից, որ երէկ անձնատուր եղան Գէյլբօն եկած Բիլինանտ, Իրիկսոն, ընդհանուր փաստարան վանաւորարար և Օրանսեան հանրապետութեան գլխաւոր անդամ Կուպֆէրբերգէր: Երէկ գնեւաւոր Գետտի վրա յարձակում գործեց բօքսերի մեծ զօրաբաժինը, բայց նրան աջողվեց քշել նրանց առանց մեծ դժուարութեան:

ԿԱՊԵՏԱՊՈՒՍ: Պետական-քարտուղար Բիլգ-նանտ և նրա օգնական Դիկսոն, որոնք անձնատուր եղան Գէյլբօնում, ասում են, թէ պէտք է ուղարկել աղբիւրի պաշտօնական անձինք նախագահ Շտէյնի մօտ՝ համոզելու համար նրան անձնատուր լինել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Յունիսի 27-ին Ժիւստիցի Սէքստանգրօվիկայ կայարան եկաւ Մեծ Իշխան Վլադիմիր Սէքստանգրօվի:

Յունիսի 27-ին Թագաւոր Կայսրը բարեհաճեց Սօլ-Լիւբլինսկ քաղաքից վերադառնալ Նովի-Պետերօվ կայարանը:

Յունիսի 27-ին եսպոնական պրինց Կունին գնաց Պետերօվ, ուր այցելութիւն գործեց Նոյա Մեծութիւններին:

ՎԵՐԻԿԱԿ: Երէկվան հեռագիրների մէջ հեռադատունը հետեւեալ աղաւաղումներն է աւելի: Բրիւսէլից հեռագրի մէջ ասված է, որ պրինց Չիլիգի զօրքերը եկան Չինաստան, պէտք է կարգալ Պէկին: Վերջին հեռագրի մէջ Լոնդոնից ասված է, որ Չինաստան են բերված 422,840 փամփուշտներ, պէտք է կարգալ 4,228,400:

28 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հրատարակված են Բարձրագոյն հրամաններ՝ տասնհինգ բուրլիանոց թղթ-թաղարանի տակելու մասին և առեւտրի ու մանուֆակտուրայի դէպքանատան բարեփոխութեան մասին: 1) առեւտրական և արդիւնադրական գործերը վարելու համար կազմակերպել ֆինանսների մինիստրութեան մէջ առեւտրի, արդիւնադրութեան, առեւտրական ծովագնացութեան և ուսումնական բաժանումները: 2) բաժանումները գործու-նէլութեան միջոցով և ընդհանուր ղեկավարութեան համար հիմնել մինիստրի կրթող օգ-նականի պաշտօն, իսկ առեւտրի և մանու-ֆակտուրայի դէպքանատան վերացնել:

ՏԵՆԷՉԻՆ: Չինական աղբիւրից ստացված տեղեկութիւնների համաձայն, օտարազգիները Պէկինում դրակ են չորրորդ արքայազնի պա-լատը, որ գտնվում է բրիտանական դեսպա-նատան դիմաց և տիրապետում է նրա վրա Գրիստոնեայ ընկերներ ապաստանել են այնտեղ «Մեծ բուռնցի» հալածանքից:

ԼՈՆԴՈՆ: Համայնքների ժողովը: Բարոլէտ հարցնում է, թէ արդեօք Ռուսաստանի դիմա-դրութիւնը ոչ չէր պատճառ, որ Եւրոպայի ճգնաժամի հէնց սկզբից բաւարար զօրքեր չու-ղարկեց Չինաստան կարգը վերականգնելու համար: Բրոքլիկ պատասխանում է, որ կառա-վարութեանը ոչինչ յայտնի չէ Ռուսաստանի խուսափող ընթացքի մասին: Բարոլէտ ապա հարցնում է, թէ արդեօք բոլոր պետութիւննե-

րի համաձայնությունից է կախած Եսպանիայի որոշումը՝ օգնական զորքեր ուղարկել Չինաստան և արդեօք այդպիսի համաձայնություն արված է։ Բրոքլին պատասխանում է, որ Եսպանիան իր զորքերն ուղարկելու ոչինչ պայման չէ դրել։ Տակուում զորքերի թիվը մեծացնելու վերաբերմամբ Մեծ-Բրիտանիայի և Եսպանիայի միջև մայիսի 31-ին բանակցություններ սկսվելին, որոնք շարունակվում էին մինչև այժմ։ Յուրիսի 9-ին բրիտանական կառավարությունը հրամանագրեց Տոկիոյ լիազորին հաղորդել եսպանական կառավարությանը զեռպանությունների կրիտիկական գրությունները և զեռպան Պեկինում և Հնդկաստանից Չինաստան զորքեր ուղարկելու մասին և թախանձարար ապացույցանել եսպանական կառավարությանը անյապազ գործողությունների անհրաժեշտությունը։ Պեկինի բրիտանական դեսպան Մակգոնալդի տեղեկությունները ստացվելիս մինչև յունիսի 12-ը, ես հաղորդում էր իր վերջին խոսակցությունը պրինց Զոնին հետ մայիսի 14-ին։ Պրինցը կարականապես հաւատացնում էր, թէ ինքն զիտաւորութիւն ունի անձամբ պաշտպանել օտարազիններին, բայց, չը նայելով այդ խոստովանութիւնը, վճռված էր պաշտպանող զօրք ուղարկել դեսպանատների համար, թէպէտ այն ժամանակ ոչինչ չէր երևում, թէ զիտաւորութիւն ունեն յարձակում գործել դեսպանութիւնների վրա։

ՄՕՍԿՎԱ։ Վկաների հարց ու փորձը վերջացաւ։ Մամոնտովի ձերբակալման այսօր կարգավորված արձանագրությունից երեւում է, որ նրա մօտ գտել են թվով վեց, արտասահմանեան անցագիր, դրամի փոխարկութեան ստացագիր, տոմսակ անվճար ճանապարհորդութեան համար արտասահմանեան երկաթուղիներով և հետեւեալ տոմսակը։ «Այլ եւս քաջ տալ չարժէ, առանց ինձ ամեն ինչ աւելի շատ և աւելի պարզ կը վճարի։ Հեռանում եմ այն զիտակցութեամբ, որ ոչ ոքի զիտամբ չարիք չեմ պատճառել, իսկ ում որ բարիք եմ արել, ներանք կը յիշեն ինձ իրանց խղճատանքով։ Բարիքների երբեք չեմ եղել»։ Պարզվեց, որ այդ տոմսակը կազմված է եղել ձերբակալութիւնից շատ առաջ։ Փոխադրված փողի գումարը ընդամենը հարիւր մարկ է. անցագրով է անվճար տոմսակը—անպէտք, իսկ թվով վեց անվճար տոմսակներ։ Վաղը է կապէրանքը կը յայտնեն իրանց եզրակացությունը։

ԲԱՅՈՒՆ, Յունիսի 26-ին, Բիբի-Էյբաթում հրդեհ սկսվեց Զուբայովի, Օլեումի, Ռուսաց ընկերությունների, Բագուի նաւթային ընկերությունների և երբ. Նաբաթի նաւթային նաւթահանքերում։ Այրվել են 19 հօր, որոնցից մի քանիսն չարտուն են խփում։ Վնասը պարզված չէ. մօտաւորապէս որոշում են հարիւր հազար։

ԿԱՌՈՒԳԱ. Սիլվան-Վաղմայեան գծի Պօկ-բովակայա կայարանի մօտ գիշերը տեղի ունեցաւ ապրանքատար գնացքների ընդհարում։ Զարգվել է մօտ 20 վազոն, սպանված են երկու հոգի, վիրաւորված ութ հոգի։

ՊԱՐԻԶ. Պարլամենտը ձայների մեծամասնութեամբ առանց վիճարկումների հաստատեց 14¹/₂ միլիոն կրեդիտ չինական արշաւանքի համար։

ՊԱՐԻԶ. Ստատոս սեկրետար Բիւլով խորին շնորհակալութիւն յայտնեց միլիտար Դեկաւէթին գերմանական կառավարութեան կողմից այն ձեռք համար, որ նա արտասանեց չարաթ օրը պարլամենտում ի յիշատակ Կէտտէլէրի։

ԼՕՆԴՈՆ. «Բէյտէրի գործակալութեան» ներկայացուցիչը խօսակցութիւն է ունեցել չինական դեսպանութեան կցորդի հետ։ Կցորդը ասել է, թէ ներկայ անկարգութիւնների համար չէ կարելի պատասխանատու համարել ոչ այլքի կայսրուհուն, ոչ կառավարութիւնը. ներանց առաջ բերողը միմիայն իշխան Տուանն է. չինացիք «Մեծ բուռնցքի» ապստամբութեանը վերաբերվում են առանց ամենափոքր համակրութեան և յայտ ունեն, որ կառավարութեանը կաշտիկ խաղաղեցուցիչ միջոցներով կանգնեցնել չարժեքները, որ շատ աւելի ստոկալի բնաւորութիւն է ստացել, քան կարծվում է։ Կատարեալ հիմք կայ յուսալու, որ Պեկինում զբոսը լինելու լաւացել է։ Զմիքը իշխանի զօրքը այնքան ուժեղ չէ, որ կարողանայ յարձակուական դիրք բռնել, ուստի նրա կուսակցութիւնը ստիպւում է նրան պաշտպանողական զօրք պահպանել մինչև որ օգնութիւն հասնի։ Ես օտարազինների պաշտպանութեան համար ինչ որ կարող է, անում է. կցորդը կարծում է, թէ այդ կաշտիկ իշխան Զմիքին։ Նա չէ հաւատում, թէ դեսպանութիւնների անդամները սպանված լինեն։ Կայսրի և կայսրուհու թունաւորման լուրն էլ արժանի չէ հաւատի։

ՎԱՇԻՆԳՏՈՆ. Պետական քարտուղար Գեյդիսը Ամերիկայի ներկայացուցիչներին արտասահմանում մի շրջաբերականով յունիսի 20-ից, որի մէջ յայտնված է, որ Միացեալ-Նահանգներին կառավարութիւնը գրութիւնը Չինաստանում համարում է կատարեալ անիշխանութիւն և քանկում է, որ պետական իշխանութիւնը և պատասխանատուութիւնը ներկայումս իսկապէս անյան տեղական նահանգական իշխանութիւնների վրա, մինչև որ նրանք բացարձակ չեն միացել ապստամբների հետ և գործ են գնում իրանց իշխանութիւնը օտարազինների կեանքը և զօրքը պաշտպանելու համար։ Ամէրիկան ճանաչում է նրանց չինական ժողովրդի ներկայացուցիչներ, որոնց հետ նա կամենում է խաղաղ և բարեկամաբար ապրել։ Նախագահի զիտաւորութիւնները սրանից յետոյ, ինչպէս և առաջ, կաշտիկն այն բանի վրա, որ պէս զի պետութիւնների հետ միարան գործել Պեկինի հետ հաղորդակցութիւնը վերականգնելու գործում, աղետել այնտեղի ամէրիկացիներին, պաշտպանել ամերիկական քաղաքացիների կեանքը, գորքը և շահերը, ուրիշ նահանգներում անկարգութիւնների տարածման առաջն առնել։ Ամէրիկայի քաղաքականութիւնը ձգտում է հիմնաւոր խաղաղութիւն և հանգստութիւն հաստատել Չինաստանում, որնք այդ երկրին հարաւորութիւն կը տան շարունակել իր գոյութիւնը որպէս մի հողային վարչական ամբողջութիւն, պահպանելով դաշնագիրներով և միջազգային իրաւունքով բարեկամ պետութիւններին արված բոլոր իրաւունքները, այնպէս որ Ամէրիկան հետեւում է հաւասար իրաւունքների սկզբունքին, այսինքն, որ բոլոր պետութիւնները հաւասար իրաւունքներ ունեն առեւտուր անելու Զինաստանի բոլոր նաւահանգիստներում։

ՇԱՆԳՀԱՅ. Պեկինից շատ դժուար է տեղեկութիւններ ստանալ, որովհետեւ հիւպատոսները այդ կողմից բացառապէս կախում ունեն երկաթուղիների գրեկատու Շէնցի։ Շէնցի և չինական ուրիշ բարձրաստիճան անձինք հողային ամենաբնորոշակ կալուածներ ունեն։ Կարծում են, որ այդ պատճառով նրանք ամեն ջանք կը գործ դնեն օգնելու օտարազիններին, որպէս զի խաղաղութիւնը պահպանվի։ Ամբոխի ամբողջ խմբեր ցուցակագրել են տալիս իրանց զինանոցներում զինւորական ծառայութեան համար. նրանք սակայն, յետոյ կարող են խուսափել կոնտրոլից։ Շենցիից պաշտպանութեան համար ամեն ջանք գործ դնող իշխանութիւնները ապահովութիւն են երաշխաւորում օտարազիններին, եթէ միայն այդ օտարազինները այնտեղ մշտական բնակութիւն ունեն։ Նրանք ոչ մի զինւորական նաւին թողաւութիւն չեն տալ ափ իջնելու զօրքերը և միայն առանձին զինւորական նաւերին թող կը արվի անցնել ամբողջութիւնների մօտից։ Եթէ նրանք մի փոքր կը հաւարվեն, նրանց կը բռնեն և հարկաւոր դէպքում, նրանց կը ուղարկեն Շէնցի առաջարկութիւնը չինական կառավար զօրքաւոր կազմել, մերժված է։

ՊԱՐԻԶ. Ֆրանսիական հիւպատոսը հետազոտում է, որ Ֆիշու հանդիս է. փոխարքան և չինական մարշալը օտարազիններին նպատաւոր կոչ են հրատարակել, սակայն պահանջում են, որ պատերազմական նաւերը առժամանակ խուսափեն Ֆուչու մտնելուց։

ԼՕՆԴՈՆ. Սենեկալից հողորդում են, որ գեներալ Բենդի հետախուզութիւն կատարեց Զաու, որ թշնամի թողել է Սենեկալի շրջակայ գիրքերը։ Ըստ երեւոյթի, բազմաթիւ թշնամի զօրքեր դնացել են Ֆիկսֆուրդ, իսկ միւսները Բեպիֆէնէք, Բեպիֆէնէք մօտ։ Բոսկրտոս հեռագրում է Պետտօրիայից, որ կէմէնտ-մի և Պէյնտի զօրքերը հասան Բեթդիեն մոտ յուիսի 24-ին։ Դէպիւմ չէ համաձայնում անձնատուր լինելու Իրանդական գուշը յարձակումով գրաւեց թշնամու գիրքը և յետ խնց Սորէա-բերդի մօտ առնված թնդանօթը։ Թշնամին հանձնում է կատարելապէս։ Անգլիական կորուստները լիովին չեն պարզված, բայց չնչին են։

ՏԵՆԱԶԻՆ. Երէկ չինացիք ամբողջ օրը գրեւորականութեամբ էին օտարազինների բնակութիւնները, մօտ 150 ուղեւ ընկան օտարազինների թաղը. շատ տներ մասամբ աւերված են, մարդկային զոհերի թիւը մեծ չէ։ Ոչ զինւորական կանիւններ, կանանց և երեխաներին հրամայված է ապաստանել քաղաքային տան գետնափայտ մի լեռնային բաւարեցնայով և մի քանի ուղեւներ յարձակում գործնելին չինական բաւարեցնային վրա, բայց քիչ ջնդորութիւն ունեցան. այն ժամանակ սկսեց ուժեղ տեղումները «Տերրիք» զինուորական նաւի 12 ֆունտանոց թնդանօ-

թը. թշնամին կրակ բացեց և երկու հարված կրան թնդանօթին և փոքր ինչ վնասեցին լափէտը։ Թնդանօթը փոխարինվեց ֆրանսիական մի շրջաբերականով յունիսի 20-ից, որի մէջ յայտնված է, որ Միացեալ-Նահանգներին կառավարութիւնը գրութիւնը Չինաստանում համարում է կատարեալ անիշխանութիւն և քանկում է, որ պետական իշխանութիւնը և պատասխանատուութիւնը ներկայումս իսկապէս անյան տեղական նահանգական իշխանութիւնների վրա, մինչև որ նրանք բացարձակ չեն միացել ապստամբների հետ և գործ են գնում իրանց իշխանութիւնը օտարազինների կեանքը և զօրքը պաշտպանելու համար։ Ամէրիկան ճանաչում է նրանց չինական ժողովրդի ներկայացուցիչներ, որոնց հետ նա կամենում է խաղաղ և բարեկամաբար ապրել։ Նախագահի զիտաւորութիւնները սրանից յետոյ, ինչպէս և առաջ, կաշտիկն այն բանի վրա, որ պէս զի պետութիւնների հետ միարան գործել Պեկինի հետ հաղորդակցութիւնը վերականգնելու գործում, աղետել այնտեղի ամէրիկացիներին, պաշտպանել ամերիկական քաղաքացիների կեանքը, գորքը և շահերը, ուրիշ նահանգներում անկարգութիւնների տարածման առաջն առնել։ Ամէրիկայի քաղաքականութիւնը ձգտում է հիմնաւոր խաղաղութիւն և հանգստութիւն հաստատել Չինաստանում, որնք այդ երկրին հարաւորութիւն կը տան շարունակել իր գոյութիւնը որպէս մի հողային վարչական ամբողջութիւն, պահպանելով դաշնագիրներով և միջազգային իրաւունքով բարեկամ պետութիւններին արված բոլոր իրաւունքները, այնպէս որ Ամէրիկան հետեւում է հաւասար իրաւունքների սկզբունքին, այսինքն, որ բոլոր պետութիւնները հաւասար իրաւունքներ ունեն առեւտուր անելու Զինաստանի բոլոր նաւահանգիստներում։

ԽՈՐԱԳԻՐ ԱՆԻՔՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ
Հրատարակչներ. ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
ՍՍՏՈՒԷԼ ՀԱՀԱՐՈՆԵՆԸ

ամուսն հիւանդներին ընդունում է Բօր-ժօմու. Анастасіевская, дача Хитарова. 2-10

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԵԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՆԱՅՈՒՄ
վաճառվում են հետեւեալ գրքերը՝

- Սարգսեան Լ., Հին ցաւ (հրատարակչական խոշոր), Մօսկւա, 1900 թ. գինը 30 կ.:
- Վազնէր, Առաջինը բնական պատմութիւնից, Թիֆլիս, 1900 թ. գ. 12 կ.:
- Սեթեան, Պատմութիւն հին և նոր կապիւրանի, աշխարհաբար, 6 տպագ. վեներիկ, կաշեկազմ, գ. 1 ր. 50 կ.:
- Սեթեան Ե. Յո երթաւ, Թիֆլիս, գ. 1 ր. 50 կ.:
- Տիւզէնէան Ն., Գործնական համարակալութիւն (հաշուապահութիւն), Պոլիս, գ. 3 ր.:
- Տիւսաք Ս., Աշխարհաբար հայ լեզուն, Պոլիս, գ. 40 կ.:
- Տէր-Աւետիքեան Ն., Վերածնութեան դար, Թիֆլիս, գ. 1 ր.:
- » Կովկասեան հանքային ջրեր, Թիֆլիս, գ. 10 կ.:
- Դիմիլ' Вѣ Тифлисі, Центральную Книжную Торговлю. (հ. և.) 1-2

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՋԱՄԱՆԵՆ
Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան»
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց՝ 4 ամսվա ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, և քաշխուրդով, և եղած դէպքերում լսնաւ և առնում պատճառի առաջարկելու։
ՊԱՐԱՊՈՒՆԻՔԻ ԱՌԱՎԱՆԵՐԵՆ
Ա) Կրկնակի խալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ձևերի, հանդերձ նախալիս արդիւնաբերական և կերտիկ գործարանական հաշուապահութեան։
Բ) Առևտրական թուականութիւն։
Գ) Առևտրական նամակագրութիւն։
Դ) Գեղազրութիւն և ամենալաւ տնտեսական ձևերի ուղղելը։
Պարապմունքները սկսվելու են 1900 թ. սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր 20 ր. ամսից յետոյ, իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյան, Ս Օ Լ Օ Լ Ա Ն, Սեպտեմբերական փողոց, տուն Լիսիցեանի, № 20։
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍԻՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ Գինն է 3 ր. 50 կօպէկ։ Օտարազգաբանցիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պատի ծախս վճարելու։
2-30

ԹԻՖԼԻՍԻ Քաղաքային Կրեդիտային Ինկերուքեան Վարչութիւնը
որանով յայտարարում է, որ աճուրդի անաջողութեան պատճառով, որ տեղի ունեցաւ ապրիլի 23-ին, ներքեւ յիշված կալուածների համար, համաձայն յայտարարութեան, որ արգիւնց ներկայ տարվա «Правительственный Вѣстникъ» № 117 և «Кавказъ» № 134 լրագիրներին մէջ, նշանակվում է երկրորդ և փերջին աճուրդ սոյն յունիսի 30-ին, ցերեկ վայ 12 ժամին։
№ 2646 Ձանկարաչ իւրի Ֆ. Դ. 42 քաւ. սածէն տարածութեամբ հողաբաժին, կամ որքան կը լինի տեղի վրա, երեքարկանի անով. 5-դ քաղ., Գրեալնայա փողոցի վրա, հիմնական պարտքն է 9245 ր. 26 կ., ապառիկներ 440 ր. 80 կ.։
№ 99 Սրիստօօսկայա Պ. Ա. 145 քաւ. սածէն տարածութեամբ հողաբաժին, նոր վրա կառուցված երկարկանի անով, ներքնատնով, չորս երկարկանի փղղէներով, 10-դ քաղ. 1-ին Մօլկանսկայա փողոցի վրա. հիմնական պարտքն է 16246 ր. 89 կ., ապառիկներ 52 ր. 81 կ.։
(27 և 29 յուն.) 2-2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C^{ie}
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկշաբթի մի անգամ։
Եւ հակառակը Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պօլիս Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 5¹/₈ յուլիսի ՍԻՐԿԱՍԻ չորեքշաբթի, նաւապետ ԳԱՐԻԳ. Եւ այդպէս շարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են տվորակներով պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտիքրայէն մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին։
ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր ԳԱՐԻՑԻՆ, Նաբէլ-ժնայա. ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարիկեդանանին, Սիօնի փող. Խօշափարութիւն և Մայսուրաձէի քարվաստար. ԲԱԳՈՒՄ—պ. Վ. և Ի. Մուրաֆեաններին, Նաբէլ-ժնայա փողոց, տուն Կրասիկիւի, № 27. ՆՕՎՕՐՈՒՄ—ՍԻՅԱԿ—Վաղիկաւազի երկաթուղու առևտրական գործակալութիւն (հ. և. չ.) 1-20